Հայաստանի Հանրապետություն

Լոռու մարզ

Լեռնանցքի գյուղապետարան

Հասցե՝ 1810, Լոռու մարզ,
գ. Լեռնանցք 11 փ. տնակ 35
հեռ. 093 – 32 – 22 - 39
E-mail: kernancq@mail.ru

№ԼՄ/ԼՀ2025/131

« 25 » 12 2014 թ.

ՀՀ Լոռու մարզպետ

պարոն Ա. Նալբանդյանին

Հարգելի պարոն Ա. Նալբանդյան.

Ձեզ եմ ներկայացնում ՀՀ Լոռու մարզի Լեռնանցքի գյուղապետի թիվ 32, 33, 34, 35 որոշումները, թիվ 19 կարգադրությունը և համայնքի ավագանու թիվ 21-Ն, 22, 23-Ն, 24, 25-Ն, 26-Ա որոշումները:

Առդիր 18 թերթ:

Լեռնանցքի գյուղապետ Լ. Աբգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԼԵՌՆԱՆՑՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԻ

« 14 » 12 2014թ. հեռ. 093-32-22-39

ՈՐՈՇՈՒՄ թիվ 32

ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Աշխատանքային օրենսգրքի» 219 հոդվածով և «Համայնքային ծառայության» օրենքի 31 հոդվածի 1-ի մասի «բ» ենթակետով, Լեռնանցք համայնքի գյուղապետարանի աշխատողներին տալ պարգևատրում մեկ ամսվա աշխատավարձի չափով՝

1.Աբգարյան Լևիկ - 240000 (երկու հարյուր քառասուն հազար) դրամ
2.Վիրաբյան Մարտիկ -144000(մեկ հարյուր քառասունչորս հազար) դրամ
3.Մացակյան Արաքսյա – 125000 (մեկ հարյուր քսանհինգ հազար) դրամ
4.Վարդանյան Գևորգ – 125000 (մեկ հարյուր քսանհինգ հազար) դրամ
5.Մելոյան Անահիտ – 125000 (մեկ հարյուր քսանհինգ հազար) դրամ
6.Վարդանյան Գայանե – 115000 (մեկ հարյուր տասնհինգ հազար) դրամ
7.Ղազարյան Բարկեն – 80000 (ութսուն հազար) դրամ
8.Բաղալյան Սվետլանա - 70000 (յոթանասուն հազար) դրամ

Լեռնանցքի գյուղապետ՝ Լ. Աբգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԼԵՌՆԱՆՑՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԻ

« 15» 12 2014թ. հեռ. 093-32-22-39

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 33

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՍԱՍԻՆ.

Հիմք ընդունելով Լեռնանցք համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը աճուրդով վաճառելու մասին ավագանու 10.10.2014թ. N 15 որոշման և հողային օրենսգրքի 70-րդ հոդվածով, հիմք ընդունելով Լեռնանցքի գյուղապետարանում աճուրդ վաճառքի արդյունքների մասին 15.12.2014թ.-ի թիվ 01 արձանագրությունը

որոշում եմ.

Աճուրդ-վաճառքում հաղթող ճանաչված Վարդեր Բաղալյանին լոտ 1-ով 0028-0003 ծածկագրի 254100դր. արժեքով 0.1039 հա հողամասը օտարել, համաձայն նրա դիմումի և հատակագծի:

1. Հողաշինարարին հանձնարարել փոփոխություն կատարել Լեռնանցք համայնքի հողային հաշվեկշռում և համապատասխան փաստաթղթերում:
2. Սույն որոշման մասին տեղյակ պահել Վարդեր Բաղալյանին:
3. Սույն որոշման մեկ օրինակը հատկացնել Սպիտակի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանմանը պետական գրանցման համար՝ որպես հիմք:

Լեռնանցքի գյուղապետ՝ Լ. Աբգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԼԵՌՆԱՆՃՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԻ

« 15 » 12 2014թ.

Հասցե՝ 1810 , Լոռու մարզ,
գ.Լեռնանցք 11 փ. տնակ 35
հեռ. 093 – 32 – 22 - 39
E-mail: lernancq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 34

ԼԵՌՆԱՆՃՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2015Թ-Ի ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԻ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԵՌԱՄՄՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն ''Տեղական ինքնակառավարման մասին'' օրենքի 49 հոդվածի և առաջնորդվելով Լեռնանցք համայնքի 2015թ-ի բյուջեն հաստատելու մասին ավագանու 15.12.2014թ-ի թիվ 25-Ն որոշմամբ (հավելված 1, 2)

1. Հաստատել համայնքի 2015թ-ի բյուջեի եկամուտների և ծախսերի եռամսյակային բաշխումը:

Լեռնանցքի գյուղապետ Լ. Աբգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՌՆԱՆՃՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԻ

« 25 » 12 2014 թ.

հեռ. 093-32-22-39

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 35

ԼԵՌՆԱՆՃՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԼՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «ՏԻՄ» օրենքի 43 հոդվածի 2-րդ կետով, Լեռնանցք համայնքի 2014թ-ի բյուջեից համայնքի հետևյալ անապահով ընտանիքներին տալ դրամական օգնություն՝

1. 4729 հոդվածի 10/07/01 ենթախմբից - 315000 (երեք հարյուր տասնհինգ հազար) դրամ որպես սոց. օգնություն.

2. 4726 հոդվածի 10/03/01/ ենթախմբից -25000 (քսանհինգ հազար) դրամ /հարազատին կորցրած անձանց/.

1.Մարտիկյան Էդուարդ – 15000 (տասնհինգ հազար) դրամ
2.Հարությունյան Հերմինե – 30000 (երեսուն հազար) դրամ
3.Մացակյան Համլետ - 20000 (քսան հազար) դրամ
4.Բաղալյան Սիրանուշ– 25000 (քսանհինգ հազար) դրամ
5.Վարդանյան Էլմիրա – 15000 (տասնհինգ հազար) դրամ
6.Եղիազարյան Հովհաննես – 25000 (քսանհինգ հազար) դրամ
7.Մելիքսեթյան Բագրատ – 20000 (քսան հազար) դրամ
8.Պողոսյան Սուսաննա – 15000 (տասնհինգ հազար) դրամ
9.Վարդանյան Սերյոժա – 15000 (տասնհինգ հազար) դրամ
10.Ավակիմովա Էթերա - 20000 (քսան հազար) դրամ
11.Վարդանյան Անահիտ -20000(քսան հազար) դրամ
12.Վարդանյան Էդգար - 20000(քսան հազար) դրամ
13.Առաքելյան Ռոզա – 25000 (քսանհինգ հազար) դրամ
14.Բաղալյան Սաթենիկ – 15000 (տասնհինգ հազար) դրամ
15.Պապոյան Գրետա – 20000(քսան հազար) դրամ
16.Սարգսյան Անահիտ – 15000 (տասնհինգ հազար) դրամ
17.Մելիքսեթյան Ավետ – 25000 (քսանհինգ հազար) դրամ

Լեռնանցքի գյուղապետ Լ. Աբգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԼԵՌՆԱՆՑՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԻ

« 16 » 12 2014թ. հեռ. 093-32-22-39

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 19

ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՆԱՍՆԱԳԼԽԱՔԱՆԱԿԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնանցք համայնքում 2015թ.-ի հունվարի 1-17-ը անասնագլխաքանակի հաշվառման համար կազմել հանձնաժողով հետևյալ կազմով՝

1. Վիրաբյան Մարտիկ
2. Վարդանյան Գևորգ
3. Մացակյան Արաքսյա
4. Վարդանյան Սամվել (ավագանի)
5. Հայբեյան Մհեր (անասնաբույժ)

Լեռնանցքի գյուղապետ՝ Լ. Աբգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՌՆԱՆՃՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«15» 12 2014 թ

Հասցե՝ 1810, Լոռու մարզ,
գ.Լեռնանցք 11փ. տեղամաս 35
Թող. 093 32 22 39
E-mail: lernanck@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ թիվ 21-Ն

ԼԵՌՆԱՆՃՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2014թ-Ի ԲՅՈՒՋԵԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ԲՀԿ 22 օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով, Լեռնանցք համայնքի 2014թ-ի բյուջեից կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Համայնքի բյուջեի պահուստային ֆոնդից 50000 (հիսուն հազար) դրամ տալ վարչական ֆոնդի 4217 հոդվածին.
2. 4269 հոդվածի 06.04.01 ենթախմբից տալ 80000(ութսուն հազար) դրամ 4216 հոդվածին.
3. 4221 հոդվածից 50000 (հիսուն հազար) դրամ տալ 4267 հոդվածին.
4. Բյուջեի վարչական ֆոնդից 1.802.0 (մեկ միլիոն ութ հարյուր հազար) դրամ հատկացնել 5112 հոդվածի 06.04.01 ենթախմբին.
5. Պահուստային միջոցների 4891 հոդվածից 260000 (երկու հարյուր վաթսուն հազար) դրամ տալ 5112 հոդվածի 06.04.01 ենթախմբին:

Ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Ռ. Արզումանյան			
Ս. Բաղդասյան			
Ա. Գևորգյան			
Ա. Հարությունյան			
Ա. Դախոյան			
Ս. Մաթևոսյան			

Ավագանու նախագահ Լ. Արզումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԼԵՌՆԱՆՃՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

« 15 » 12 2014 թ.

Հասցե՝ 1810 , Լոռու մարզ.
գ.Լեռնանցք 11 փ. տնակ 35
հեռ. 093 - 32 - 22 - 39
E-mail: lernancq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 22

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ մասով.

Ավագանին որոշեց

1. Հաստատել Լեռնանցք համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը:
2. Թույլատրել Լեռնանցք համայնքի ղեկավարին՝ հիմք ընդունելով սույն որոշումը, օրենքով սահմանված կարգով դուրս գրել հետագա շահագործման համար ոչ պիտանի, մաշված, գործածության համար ոչ պիտանի գույքը:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Ռ.Աբգարյան			
Ս. Բաղալյան			
Ա. Գևորգյան			
Ա. Հարությունյան			
Ա. Չախոյան			
Ս. Վարդանյան			

Լեռնանցքի գլխավոր՝ Լ. Աբգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՌՆԱՆՑՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

« 15 » 12 2014 թ.

Հասցե՝ 1810, Լոռու մարզ,
գ.Լեռնանցք 11 փ. տնակ 35
հեռ. 093 – 32 – 22 – 39
E-mail: lernancq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 23-Ն

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2015 Թ. ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18 կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածներով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով՝

ավագանին որոշում է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնանցք համայնքում 2015 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ	կողմ	դեմ	ձեռնպահ
Ռ.Աբգարյան			
Ս. Բաղալյան			
Ա. Գևորգյան			
Ա. Հարությունյան			
Ա. Չախոյան			
Ս. Վարդանյան			

Լեռնանցքի գյուղապետ Լ. Աբգարյան

Հավելված
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
գյուղական համայնքի ավագանու
2015 թ. դեկտեմբերի 15-ի թիվ 23 -Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆՃՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

Հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 10000 դրամ.

բ) սույն հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ չնախատեսված օբյեկտների համար՝

բա)201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 10000 դրամ.

բբ)501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 դրամ.

բգ)1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30000 դրամ.

բդ)3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 դրամ.

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝

3000 դրամ.

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝

5000 դրամ.

2. Համայնքի վարչական տարածքում՝ շենքերի, շինությունների, բաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների(բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով, տեղական տուրքը սահմանել՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3000 դրամ.

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ 5000 դրամ.

4. Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանել՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում, յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2000 դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում, յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 1500 դրամ.

5. Համայնքի տարածքում՝

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար՝ 0 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 150000 դրամ.

գ) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 30000 դրամ.

գա) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար՝

հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 3000 դրամ.

ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 1000 դրամ.

5/1 Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 50000 դրամ:

6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

ա) առևտրի օբյեկտների համար՝	25000	դրամ.
բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝	50000	դրամ.
գ) բաղնիքների (սաունաների) համար՝	200000	դրամ.

դ) խաղատների կազմակերպման համար՝ 500000 դրամ.

ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250000 դրամ.

զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100000 դրամ:

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

բ) բունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 500 դրամ.

դ) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ:

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 0 դրամ:

Հայաստանի Հանրապետության հմայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ 50000__դրամ:

9. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու ավարտած շինարարության շահագործումը փաստագրելու համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման տեղական վճարը սահմանել՝ 5000 դրամ:

10. Համայնքի տարածքում տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից տեղական վճարը սահմանել՝ 1000 դրամ:

Լեռնանցքի գյուղապետ Լ. Աբգարյան

15 դեկտեմբերի 2014թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՌՆԱՆՑՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

« 15 » 12 2014 թ.

Հասցե՝ 1810, Լոռու մարզ,
գ.Լեռնանցք 11 փ. տնակ 35
հեռ. 093 32 22 39
E-mail: lernanceq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ թիվ 24

ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ և 26-րդ կետերով և "Իրավական ակտերի մասին" ՀՀ օրենքի 60-րդ, 72-րդ և 78-րդ հոդվածներով համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Լեռնանցք համայնքի ղեկավարի վարձատրության չափը, գյուղապետարանի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնանցք համայնքի ավագանու 2014թ-ի հուլիսի 07-ի թիվ 08 որոշումը:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2015թ-ի հունվարի 1-ից:

Ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Ռ.Աբգարյան			
Ս. Բաղալյան			
Ա. Գևորգյան			
Ա. Հարությունյան			
Ա. Չախոյան			
Ա. Պետրոսյան			

Լեռնանցքի գյուղապետ Լ. Աբգարյան

Հավելված

Լեռնանցքի ավագանու

15.12.2014թ. թիվ 24 որոշման

ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 9
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորների թիվը	Պաշտոնական դրույքաչափը (հազար դրամ)
	Համայնքի ղեկավար	1	280.0
	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	144.0
	Աշխատակազմի քարտուղար	1	140.0
	Աշխատակազմի առաջատար մասնագետ - հաշվապահ	1	125.0
	Աշխատակազմի առաջատար մասնագետ	2	125.0
	Աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ	1	124.0
	Տեխսպասարկման անձնակազմ		
	Վարորդ	1	80.0
	Հավաքարար	1	70.0
	Ընդամենը	9	1088.0

Համայնքի ղեկավար Լ. Աբգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԼԵՌՆԱՆՑՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«15» 12 2014 թ.

Հասցե՝ 1810, Լոռու մարզ,
գ.Լեռնանցք 11 փ. տնակ 35
հեռ. 093 – 32 – 22 – 39
E-mail: lernanq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 25-Ն

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2015Թ-Ի ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ և 16-րդ հոդվածի 3-րդ կետով.

1. Հաստատել Լեռնանցք համայնքի ավագանու թիվ 01-Ն որոշմամբ հաստատված 2015թ-ի բյուջեի փոփոխությունները

ա) Եկամուտների գծով – 29614.2

բ) Ծախսային գծով – 32614.2

գ) 2014թ-ի տարեվերջի հավելուրդ - 3000.0

2. Հաստատել համայնքի տեղական բյուջեից փաստացի հատկացումներն ըստ ծախսերի – 32614.2
3. Հաստատել համայնքի տեղական բյուջեի եկամուտները – 29614.2
4. Հաստատել բյուջետային ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման – 34604.2

որից

ա) վարչական - 29614.2

բ) Ֆոնդային – 4990.0

Ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Ռ.Աբգարյան			
Ս. Բաղալյան			
Ա. Գևորգյան			
Ա. Հարությունյան			
Ա.Ծառուկյան			
Վ.Դավթյան			

Լեռնանցքի գլխավոր՝ Լ. Աբգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Լեռնանցք համայնք, հասցե 11 փող. տնակ թիվ 35,
հեռախոս 093-32-22-39, էլ. փոստ lernancq.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 15 » դեկտեմբերի 2014 թվականի N 26 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ ԿԱՄԱՎՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60-րդ հոդվածով՝ Լեռնանցք համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Լեռնանցք համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունվարի 1-ից:

Ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Ռ. Աբգարյան			
Ա. Բաղայան			
Ա.Գևորգյան			
Ա. Հարությունյան			
Ա. Զախոյան			
Ա. Վարդանյան			

Լեռնանցքի գլխավոր մասնագետ Լ. Աբգարյան

20 14 թ. դեկտեմբերի

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք համայնքի ավագանու
2014 թվականի դեկտեմբերի 15-ի N 26 -Ա որոշման

ԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ ԿԱՄԱՎՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Լեռնանցք համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգի հետ կապված հարաբերությունները:

2.Ըստ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համայնքի ղեկավարը իրականացնում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով թվարկված և Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով վերապահված կամավոր լիազորություններ: «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով համայնքի ղեկավարը իրականացնում է հետևյալ կամավոր լիազորությունները՝

Պաշտպանության կազմակերպման բնագավառում՝

1) աջակցում է քաղաքացիական պաշտպանության մարմինների գործունեությանը.

2) աջակցում է զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, ինչպես նաև զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծմանը.

3) աջակցում է բնակչության, հատկապես երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակությանը:

Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում՝

1) իրականացնում է բնակարանային և սոցիալական նշանակության այլ օբյեկտների շինարարությունը և կապիտալ վերանորոգումը.

2) իրականացնում է կառուցապատման աշխատանքները.

3) կազմում է «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված, ըստ անհրաժեշտության մշակվող, քաղաքաշինական փաստաթղթերի նախագծերը.

4) կազմակերպում է հանգստի վայրերի խնամքը և պահպանությունը.

5) կազմակերպում է սանիտարական մաքրման կայանքների շինարարությունը և շահագործումը:

Հողօգտագործման բնագավառում՝

1) իրականացնում է համայնքի սեփականություն համարվող հողամասերի բարելավման աշխատանքներ.

2) իրականացնում է ներտնտեսային հողաշինարարական աշխատանքներ:

Տրանսպորտի բնագավառում՝

1) կազմակերպում է համայնքային ենթակայության ճանապարհների, կամուրջների և ինժեներական այլ կառույցների շինարարությունը:

Կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում՝

1) աջակցում է արհեստների, ժողովրդական ստեղծագործության և գեղարվեստական ինքնագործունեության զարգացմանը.

2) աջակցում է համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների պահպանությանը.

3) հաշվառում, դասակարգում և տարածում է համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային, բնական և տուրիստական-ռեկրեացիոն ռեսուրսների մասին տեղեկատվությունը.

4) աջակցում է երիտասարդության դերի բարձրացմանը.

5) աջակցում է հանրակրթական դպրոցների գործունեությանը:

Առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում՝

1) աջակցում է սանիտարական վիճակի բարելավմանը.

2) աջակցում է առողջապահական մարմինների՝ սանիտարահիգիենիկ, հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների իրականացմանը.

3) նպաստում է համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը, իրականացնում է սպորտային հրապարակների և մարզական այլ կառույցների շինարարություն, ստեղծում է հանգստի գոտիներ:

Աշխատանքի և սոցիալական ծառայության բնագավառում՝

1) նպաստում է նոր աշխատատեղերի ստեղծմանը, կազմակերպում է վճարովի հասարակական աշխատանքներ.

2) միջոցներ է ձեռնարկում հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ:

Գյուղատնտեսության բնագավառում՝

1) աջակցում է գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը.

2) աջակցում է տոհմային և սերմնաբուծական աշխատանքներին:

3. Յուրաքանչյուր տարի կամավոր լիազորությունների իրականացման համար կարող է նախատեսվել ֆինանսական միջոցներ, որը չի կարող գերազանցել այդ տարվա համայնքի բյուջեի մուտքերի 30%-ը:

4. Այն դեպքում, երբ համայնքի ղեկավարի կողմից կամավոր լիազորությունների իրականացման համար պահանջվում է ֆինանսական միջոցների հատկացում՝ համայնքի ղեկավարը դրանք իրականացնում է համայնքի բյուջեով նախատեսված հատկացումներին համապատասխան:

5. Այն դեպքում, երբ համայնքի ղեկավարի կողմից կամավոր լիազորությունների իրականացման համար չի պահանջվում ֆինանսական միջոցների հատկացում՝ համայնքի ղեկավարը դրանք իրականացնում է ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ:

6. Կամավոր լիազորությունների իրականացման առաջարկություն կարող են նախաձեռնել համայնքի ղեկավարը, համայնքի ավագանու անդամները, բնակիչները, հասարակական կազմակերպությունները և միավորումները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտներ:

7. Նախաձեռնողը համայնքի ղեկավարի քննարկմանն է ներկայացնում կամավոր լիազորության իրականացման վերաբերյալ առաջարկությունը՝ նշելով օրենսդրությամբ նախատեսված լիազորության տեսակը, դրա համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը և անհրաժեշտության հիմնավորումը հավաստող փաստաթղթեր, եթե դրանք առկա են:

8. Համայնքի ղեկավարը դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո՝

1) կամավոր լիազորության իրականացմանը համաձայնվելու դեպքում՝ մեկամսյա ժամկետում ճշտում է դրանց արժանահավատությունը, հաշվարկում կամավոր լիազորության իրականացման համար գումարի մեծությունը:

2) կամավոր լիազորության իրականացմանը չհամաձայնելու դեպքում համայնքի ղեկավարը գրավոր տեղեկացնում է այդ մասին նախաձեռնողին՝ նշելով չհամաձայնելու պատճառները, փաստական և իրավական հիմքերը:

9. Համայնքի ղեկավարը կամավոր լիազորության իրականացման դեպքում ընդունում է որոշում կամավոր լիազորության իրականացման կամ մերժելու վերաբերյալ: Որոշման մեջ նշվում են՝ կամավոր լիազորության իրականացման լիազորության տեսակը, դրա համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը և անհրաժեշտության հիմնավորումը, իսկ կամավոր լիազորության իրականացումը մերժելու դեպքում մերժելու պատճառները և հիմքերը:

13. Սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացվող մեկանգամյա սոցիալական օգնության առավելագույն չափը սահմանվում է 30000 (երեսուն հազար) << դրամ: Նույն ընտանիքին տարվա ընթացքում սոցիալական օգնության կարող է հատկացվել առավելագույնը 2 անգամ, որի չափը չի կարող գերազանցել սոցիալական օգնության առավելագույն չափի 1,5-պատիկի չափը: Արգելվում է սոցիալական օգնության հատկացումը համայնքի բնակիչ չհանդիսացող անձանց: Համայնքի ղեկավարի

գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների ընտանիքի անդամներին և համայնքի ղեկավարի մերձավոր բարեկամներին (ծնող, քույր, եղբայր, երեխա), եթե վերջիններս վարում են համատեղ տնտեսություն:

13.1. Համայնքի բնակիչների յուրաքանչյուր նորածին երեխաների ծնողներից մեկին, որպես խրախուսանք հատկացվող միանվագ դրամական օգնությունը սահմանվում է 20000 (քսան հազար) << դրամ:

13.2. Համայնքի մահացած բնակիչների հարազատներից մեկին (ծնող, քույր, եղբայր, երեխա, փեսա, հարս), որպես թաղման ծախս հատկացվող միանվագ դրամական օգնության չափը սահմանվում է 30000 (երեսուն հազար) << դրամ, իսկ արտերկրում մահացածների և զոհվածների ընտանիքների հարազատներից մեկին հատկացվող միանվագ դրամական օգնության չափը սահմանվում է 50000 (հիսուն հազար) << դրամ:

14. Սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողներին ուսման վարձի հատկացումը կարող է իրականացվել միայն պետական բարձրագույն կամ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորելու դեպքում և առավելագույնը կարող է հատկացվել տարեկան 2 անգամ՝ ոչ ավելի քան տարեկան ուսման վարձի 20%-ի չափով, որը չի կարող գերազանցել 100.0 (հարյուր հազար) << դրամը: Արգելվում է ուսման վարձի հատկացումը համայնքի բնակիչ չհանդիսացող, ինչպես նաև համայնքի բյուջեի նկատմամբ 50000 (հիսուն հազար) դրամ և ավելի հարկային պարտականությունները չկատարած անձանց, համայնքի ղեկավարի, գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների ընտանիքի անդամներին, մերձավոր բարեկամներին (ծնող, քույր, եղբայր, երեխա), եթե վերջիններս վարում են համատեղ տնտեսություն:

15. Համայնքի ղեկավարի կողմից սույն կարգով չնախատեսված կամավոր լիազորությունների իրականացումն արգելվում է:

Լեռնանցքի գյուղապետ Լ. Արգարյան